17 հունվարի 2018թ.

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 364159/09

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 5412 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 17.01.2018թ. թիվ 5412 արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

<<ՈՒնիվերսալ>> ՍՊ ընկերության տնօրեն Ռուբեն Բաղդասարյանը (ՀՎՀՀ 01215349, հասցե՝ ՀՀ ք. Երևան Սիսակյան փող. 181/5), համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչության 23.11.2017թ. թիվ 1500587 ակտի, հաշվապահական հաշվառումից բացի, օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը, որը կարող է առաջացնել հարկի նվազեցում:

Ընկերության տնօրեն Ռուբեն Բաղդասարյանը ներկայացել է վարչական գործի քննությանը: Վարչական գործում առկա չեն բացատրություններ, լրացուցիչ ապացույցներ և միջնորդություններ, ինչպես նաև բացակայում են վարչական պատասխանատվությունը մեղմացնող կամ բացառող հանգամանքները:

Նկատի ունենալով, որ նշված արարքի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1 հոդվածի 1-ին մասով, ուստի ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244^2 , 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1 հոդվածի 1-ին մասի, Ռուբեն Բաղդասարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 25.000 (քսանհինգ հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝

Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ընդունելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարներին.

900005240487՝ 17.500 դրամ տուգանքի 70%, 900013000246՝ 7.500 դրամ տուգանքի 30%

վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Վճարումը կատարել կանխիկ և անդորրագրերի օրինակները ուղարկել Իրավաբանական վարչության ՎԻՎ գործերի բաժին՝ ք. Արտաշատ, Օգոստոսի 23/83:

Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման օրինակը _____